ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

Թիվ 8

„04„մարտի 2014թ.

ՀՀ Արմավիրի մարզի մարզպետ
Պարոն Ա. Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ.

Կից Ձեզ ենք ներկայացնում Ծաղկալանջ համայնքի 25.02.2014թ-ին կայացած ավագանու թիվ 1 հերթական նիստի որոշումները:

Առդիր՝ 11 էջ

Համայնքի ղեկավար՝ Մ. Մկրտչյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մտից թիվ 112.63/2670-14
«04» 03 2014թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Ծաղկալանջի գյուղական համայնք, 4-րդ փողոց N9

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 փետրվարի 2014 թվականի N 1

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12 հոդվածի 4-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկալանջի գյուղական համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Ավագանու նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

	կողմ (ստոր.)	դեմ (ստոր.)	ձեռնպահ (ստոր.)
1. Երվանդյան Երվանդ			
2. Դավթյան Գևորգ			
3. Պողոսյան Մխիթար			
4. Առաքելյան Վաչագան			
5. Ղազարյան Ալիկ			

ԾԱՂԿԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝

/Մ. ՄԿՐՏՉՅԱՆ/

Հավելված
Արմավիրի մարզի
Ծաղկալանջի գյուղական համայնքի
ավագանու « 25 » փետրվարի 2014թ.
N1 որոշման

1. Օրակարգի հաստատում:

/ Մ. Մկրտչյան-Համայնքի ղեկավար/

2. . Ծաղկալանջի գյուղական համայնքի նոյեմբերի 22-ի ավագանու թիվ 2 -Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ:

/ Մ. Մկրտչյան-Համայնքի ղեկավար/

3. Ծաղկալանջի գյուղական համայնքի 2013թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 3-Ն որոշման մեջ կատարել լրացումներ և փոփոխություններ:

/ Մ. Մկրտչյան-Համայնքի ղեկավար/

4. Ծաղկալանջ համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին դրամական օգնություն տրամադրելու մասին:

/ Մ. Մկրտչյան-Համայնքի ղեկավար/

Աշխատակազմի քարտուղար՝ / Ս. Սենիքերիմյան /

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԾԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

25 փետրվարի 2014 թվականի N 2 - Ն

ԾԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի առաջին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածներով Արմավիրի մարզի Ծաղկալանջի գյուղական համայնքի ավագանին

որոշում է՝

1. 2013թվականի նոյեմբերի 22-ի թիվ 2-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչել:
2. Սահմանել համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ

	կողմ (ստոր.)	դեմ (ստոր.)	ձեռնպահ (ստոր.)
1. Երվանդյան Երվանդ			
2. Դավթյան Գևորգ			
3. Ղազարյան Ալիկ			
4. Պողոսյան Մխիթար			
5. Առաքելյան Վաչագան			

ԾԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ */Մ. ՄԿՐՏՉՅԱՆ/*

2014թվականի

Հավելված
Արմավիրի մարզի
Ծաղկալանջի գյուղական համայնքի
ավագանու «25» փետրվարի 2014թ.
N-2-Ն որոշման

«1.»Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի շինարարությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է հիմնական օբյեկտների համար

«1) »մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի , այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների ,ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար ՝ հինգ հազար դրամ:

«2) ».սույն կետի «1) »ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

«ա.) »/201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝տաս հազար դրամ:«բ.) »/501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝տասնհինգ հազար դրամ:

«գ.) »/ 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝քսան հազար դրամ:

Ոչ հիմնական օբյեկտների տեղադրման համար՝

«3) ».մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝մեկ հազար դրամ:

«3) ». 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հազար հինգ հարյուր դրամ:

«2.»Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման ,ուժեղացման ,վերականգման,արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար,եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

«1»»չի նախատեսվում կցակառույցների,վերակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ դեպքում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մեկ հազար դրամ:

բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման,վերականգման կամ արդիականացման աշխատանքներից նախատեսվում է նաև կցակառույցների,վերակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ դեպքում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն,ապա բացի սույն կետի «1»»ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար « Տեղական տուրքերի և վճարների մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

«3) »նախատեսվում է միայն կցակառույցների,վերակառույցների,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ դեպքում ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն ,ապա այն համարվում է նոր շինարարություն , որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:

«3.»Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է հազար դրամ:

«4.» Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

«1»»Ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ հինգ հազար դրամ :

«2»»ծխախոտի արտադրանքի, վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ երեք հազար դրամ:

«5.» Համայնքի տարածքում՝

«1»»բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ.350 դրամ:

«2»»Հեղուկ վառելիքի,տեխնիկական հեղուկների,հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հարյուր հիսուն հազար դրամ.150000դրամ:

«6.» Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առքուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել հիսուն հազար դրամ. 50000 դրամ:

«7.» Համայնքի տարածքում՝ առևտրի,հանրային սննդի, զվարճանքի,շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները,բաղնիքները (սաունաները),խաղատները ժամը 24 ^{00}-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

«1»»առևտրի օբյեկտների համար՝քսանհինգ հազար դրամ.25000դրամ:

«2»»հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝հիսուն հազար դրամ.50000 դրամ:

«3»» բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ.200000դրամ:

«4»»խաղատների կազմակերպման համար՝ հինգ հարյուր հազար դրամ.500000դրամ:

«5»»շահումով խաղերի կազմակերպման համար՝ երկու հարյուր հիսուն հազար.250000դրամ:

«6»» վիճակախաղերի կազմակերպման համար՝ մեկ հարյուր հազար դրամ.100000դրամ:

«8.»Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է ՝

«1»»ալկահոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ. 1000դրամ:

«2»»թունդ ալկահոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ. 2500դրամ;

«3»»ցայլ արտաքին գովազդի համար՝ հինգ հարյուր դրամ.500դրամ:

«4»»դատարկ գովազդային վահանակների համար՝ յոթ հարյուր դրամ.700 դրամ:

«9.»Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ մեկ հազար դրամ 1000 դրամ:

«10.»Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ 1500 դրամ:

«11.»Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու , ավարտած շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել երեք հազար դրամ:

Աշխատակազմի քարտուղար՝ / Ս. Սենիքերիմյան /

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Ծաղկալանջի գյուղական համայնք, 4-րդ փողոց N9

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 փետրվարի 2014 թվականի N 2-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 3-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 54-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով, 70-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ և 33-րդ հոդվածներով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկալանջի գյուղական համայնքի ավագանին ***որոշում է***՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկալանջի գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 20-ի «2014 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 3-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) Տարեսկզբի ազատ մնացորդը ընդամենը՝ 297.600 դրամ. վարչական մասի 180.000 դրամը ուղղել նախորդ տարիների ապառքի 05-1.1 հատվածի 4213 հոդվածին, ֆոնդային մասի 117.600 դրամը ուղղել նախորդ տարիների ապառքի 01-1.1 հատվածի 5122 հոդվածին:

2) Բյուջեում կատարել փոփոխություն պահուստային միջոցների 3.112.000 դրամից 144.000 դրամ տալ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 01-1.1 հատվածի 4214 հոդվածին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ

	կողմ (ստոր.)	դեմ (ստոր.)	ձեռնպահ (ստոր.)
1. Երվանդյան Երվանդ			
2. Դավթյան Գևորգ			
3. Պողոսյան Մխիթար			
4. Առաքելյան Վաչագան			
5. Ղազարյան Ալիկ			

ԾԱՂԿԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝ */Մ. ՄԿՐՏՉՅԱՆ/*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Ծաղկալանջի գյուղական համայնք, 4-րդ փողոց N9

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 փետրվարի 2014 թվականի N 4

ԾԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի առաջին մասի հինգերրորդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծաղկալանջի գյուղական համայնքի ավագանին

որոշում է՝

1. Ծաղկալանջի գյուղական համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին ֆինանսական օգնություն հատկացնել՝ համաձայն հավելվածի
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ

	կողմ (ստորագրություն)	դեմ (ստորագրություն)	ձեռնպահ (ստորագրություն)
1. Երվանդյան Երվանդ			
2. Դավթյան Գևորգ			
3. Պողոսյան Մխիթար			
4. Առաքելյան Վաչագան			
5. Ղազարյան Ալիկ			

ԾԱՂԿԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝ /Մ. ՄԿՐՏՉՅԱՆ/

Հավելված
Արմավիրի մարզի
Ծաղկալանջի գյուղական համայնքի
ավագանու « 25 » փետրվարի 2014թ.
N-4 որոշման

ԾԱՂԿԱԼԱՆՋԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՑՈՒՑԱԿ

1. Շեկիկյան Արեգնազ	50.000 դրամ
2. Թորոսյան Վարուժան	30.000 դրամ
3. Երվանդյան Հասմիկ	30.000 դրամ
4. Սարգսյան Սամվել	30.000 դրամ
5. Գաբրիելյան Ստյոպա	15.000 դրամ
6. Նավասարդյան Գարսևան	30.000 դրամ
7. Կիրակոսյան Ծաղիկ	30.000 դրամ
8. Նահապետյան Մելինե	30.000 դրամ
9. Օզմանյան Շիրիմ	30.000 դրամ
10. Արսենյան Մերի	30.000 դրամ
11. Հարությունյան Հովհաննես	50.000 դրամ

Աշխատակազմի քարտուղար՝ / Ս. Սենիքերիմյան /